ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 960-Ա/2 «30» սեպտեմբերի 2016

«Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կրթության մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի ուսանողական խորհրդի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԸՆԴՈՒՆՎԱԾ Է
Խ.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի ՈՒսանողական
խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 10-ին
կայացած ընդհանուր ժողովում

Հավելված
ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016
թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 960-Ա/2 հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (այսուհետ՝ ՀՊՄՀ) ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) ուսանողական ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական հասարակական միավորում է:

2. Խորհրդի լիազորությունները և գործունեության կարգը, ՀՀ օրենսդրությանը համապատասխան, սահմանվում է սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

3. Խորհուրդն ապահովում է ուսանողական ինքնավարության և ուսանողական ինքնակառավարման գործընթացները ՀՊՄՀ-ի ողջ ուսանողության շրջանում, արտահայտում և պաշտպանում է ուսանողության և հետբուհական կրթություն ստացողների շահերը, նպաստում նրանց հասարակական, գիտական, ինտելեկտուալ, ստեղծագործական, մշակութային, բարոյական և հոգևոր զարգացմանը:

4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Խորհուրդը զբաղվում է հրատարակչական գործունեությամբ, կարող է հրապարակել ամսագրեր, պարբերականներ և այլն:

5. ՀՊՄՀ-ի ղեկավար մարմինների, ստորաբաժանումների, ՀՊՄՀ-ում գործող, ինչպես նաև արտահամալսարանական գիտական, կրթական, մշակութային, հոգևոր, բարեգործական և այլ կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց հետ Խորհրդի հարաբերությունները

կառուցվում են իրավահավասարության և փոխադարձ պայմանավորվածությունների, ՀՊՄՀ-ի և սույն կանոնադրությունների հիման վրա:

2. ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

6. Խորհուրդը՝

1) ապահովում է ՀՊՄՀ-ում ինքնակառավարման և ուսանողական ինքնավարության գործընթացների ծավալումն ու զարգացումը, հետևում ուսանողության և հետբուհական կրթություն ստացողների իրավունքների ու շահերի պաշտպանությանը.

2) ՀՊՄՀ ղեկավար մարմիններին է ներկայացնում ուսանողության խնդիրները, բողոքներն ու առաջարկները.

3) մասնակցում է ուսումնակրթական գործընթացների, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ուսանողական գիտական գործունեության կազմակերպմանը.

4) նպաստում է ուսանողության ստեղծագործական, ինտելեկտուալ, մշակութային ու հոգևոր զարգացմանը, ուսանողության առօրյայի, հանգստի և ազատ ժամանցի կազմակերպմանը.

5) հաստատում է կապեր ու գործնական փոխհարաբերություններ ՀՀ և օտարերկրյա ուսանողական, երիտասարդական, կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների հետ.

6) հնարավորության դեպքում իրականացնում է սոցիալական և բարեգործական նշանակության ծրագրեր:

7. Խորհուրդը մշակում և ՀՊՄՀ-ի ղեկավար մարմիններին է ներկայացնում ուսանողական կյանքին և ուսումնակրթական գործընթացներին առնչվող հարցեր, տարբեր որոշումների նախագծեր և նպաստում դրանց ընդունմանն ու իրականացմանը:

3. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8. Խորհուրդը իր գործունեությունը կառուցում է ելնելով իր նպատակներից ու խնդիրներից:

9. Խորհուրդը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է տնօրինել իրեն տրամադրված գույքը:

10. Խորհուրդը ձևավորվում է ներկայացուցչական ընտրությունների սկզբունքով:

11. Խորհրդի անդամ կարող է լինել ՀՊՄՀ-ի յուրաքանչյուր ուսանող, ինչպես նաև ՀՊՄՀ-ում հետբուհական կրթություն ստացող անձը:

12. Խորհուրդը ՀՀ օրենսդրությամբ և ՀՊՄՀ-ի կանոնադրությամբ նախատեսված կարգով մասնակցում է ՀՊՄՀ-ի կառավարմանը:

13. Խորհրդի ղեկավար մարմիններն են՝

ա) ընդհանուր ժողովը,

բ) նախագահը,

գ) նախագահությունը:

14. Ընդհանուր ժողովը Խորհրդի բարձրագույն ղեկավար մարմինն է:

15. Ընդհանուր ժողովին մասնակցում են ֆակուլտետային ուսանողական խորհուրդների ներկայացուցիչները՝ նախագահության կողմից հաստատված համամասնությամբ:

16. Ընդհանուր ժողովի որոշումները ընդունվում են մասնակիցների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնության սկզբունքով:

17. Ընդհանուր Ժողովը գումարվում է առնվազն տարին երկու անգամ:

18. Ընդհանուր Ժողովն իրավասու է, եթե նրա աշխատանքներին մասնակցում են ընդհանուր ժողովի անդամ հանդիսացող ներկայացուցիչների կեսից ավելին:

19. Ընդհանուր ժողովի արտահերթ նիստ հրավիրվում է Խորհրդի նախագահի որոշմամբ կամ ընդհանուր ժողովի անդամների առնվազն 1/3-ի որոշմամբ: Ընդհանուր ժողովի արտահերթ նիստի օրակարգը ներկայացվում է վերջինիս հրավիրողների նախաձեռնությամբ:

20. Ընդհանուր ժողովը՝

1) հաստատում է նախագահության կողմից առաջադրված խորհրդի կանոնադրությունը կամ կանոնադրության փոփոխությունները, որը ներկայացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի հաստատմանը,

2) քննարկում է ընթացիկ և հեռանկարային հարցեր,

3) ընտրում է Խորհրդի նախագահին, փոխնախագահներին, քարտուղարին, որոնք հանձնաժողովների, ակումբների և ֆակուլտետների ուսանողական խորհուրդների նախագահների հետ համատեղ կազմում են նախագահություն,

4) լսում և հաստատում է նախագահի տարեկան հաշվետվությունը խորհրդի կատարած աշխատանքների մասին:

21. Խորհրդի նախագահը՝

1) ղեկավարում է Խորհրդի աշխատանքները.

2) տնօրինում է Խորհրդի ֆինանսական միջոցները.

3) ներկայացնում է Խորհուրդը ՀՊՄՀ-ում և ՀՊՄՀ-ից դուրս փոխհարաբերություններում,

4) ընդունում է որոշումներ, տալիս հրամաններ, հանձնարարականներ և կարգադրություններ, հրավիրում է խորհրդակցություններ և իրականացնում ընդհանուր վերահսկողություն խորհրդի գործունեության նկատմամբ.

5) կարող է առաջադրել հանձնաժողովների ու ակումբների նախագահների թեկնածությունը, որը հաստատվում է նախագահության կողմից, ինչպես նաև նշանակում է ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար մինչև ընտրությունները.

6) ընդունում է ֆակուլտետների ուսանողական խորհուրդների, հանձնաժողովների և ակումբների նախագահների հաշվետվությունները և հաստատում է նրանց ներկայացրած ծրագրերը.

7) իր բացակայության ժամանակահատվածում նախագահի պաշտոնակատար է նշանակում փոխնախագահներից մեկին, իսկ վերջիններիս բացակայության դեպքում քարտուղարին կամ նախագահության այլ անդամի.

8) օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է իրեն վերապահված այլ լիազորություններ:

22. Խորհրդի փոխնախագահներից յուրաքանչյուրը զբաղվում է որոշակի թվով ֆակուլտետների, հանձնաժողովների և ակումբների աշխատանքների համակարգմամբ: Նախագահի բացակայության պայմաններում նախագահի կողմից նախագահի պաշտոնակատար նշանակված փոխնախագահը կատարում է նախագահի պարտականությունները:

23. Խորհրդի քարտուղարը ղեկավարում է քարտուղարության աշխատանքները: Նախագահի և փոխնախագահների բացակայության դեպքում կատարում է նախագահի պարտականությունները:

24. Խորհրդի նախագահությունը աշխատանքային նիստեր է գումարում առնվազն շաբաթը մեկ անգամ: Նախագահությունը՝

1) համակարգում է ֆակուլտետների խորհուրդների, հանձնաժողովների և ակումբների գործունեությունը.

2) դադարեցնում է իր լիազորությունները ժամկետից շուտ ընդհանուր ժողովի անդամների պարզ մեծամասնության որոշմամբ:

25. Խորհրդի հանձնաժողովներն են՝

1) մշակույթի.

2) սոցիալական.

3) արտաքին կապերի.

4) սպորտի և առողջ ապրելակերպի.

5) որակի.

6) լրատվական.

7) կազմակերպչական:

26. Խորհրդի ակումբներն են՝

1) ինտելեկտուալ.

2) բնապահպանության.

3) բանավեճի:

27. 25-րդ և 26-րդ կետերում նշված ոլորտներին չառնչվող կարևոր այլ հարցերով զբաղվելու համար նախագահությունը կարող է ստեղծել մշտական կամ ժամանակավոր այլ հանձնաժողովներ ու ակումբներ:

28. Հանձնաժողովներն ու ակումբները կարող են ունենալ իրենց կանոնակարգերը, որոնք չեն հակասում խորհրդի կանոնադրությանը և հաստատվում են ընդհանուր ժողովում:

29. Խորհրդի նախագահության մեջ մտնում եմ Խորհրդի նախագահը, փոխնախագահները, քարտուղարը, ֆակուլտետների ուսանողական խորհուրդների նախագահները, հանձնաժողովների և ակումբների նախագահները և Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ այլ անձինք: Խորհրդի նախագահության անդամների լիազորությունների ժամկետը երկու տարի է:

30. Ֆակուլտետի ինքնակառավարման բարձրագույն մարմինը ֆակուլտետի ուսանողական խորհուրդն է:

31. Ֆակուլտետի կուրսերի, ուսանողների թվի համամասնության սկզբունքով (յուրաքանչյուր 50 /հիսուն/ ուսանողին մեկ ներկայացուցիչ) ընտրված, ներկայացուցիչները միասին կազմում են ֆակուլտետի ուսանողական խորհրդի ընդհանուր ժողով, որի կազմը հաստատում է ՀՊՄՀ ուսանողական խորհրդի նախագահը: Ֆակուլտետի ընդհանուր ժողովը որոշումներ կայացնում է ներկա անձանց ձայների պարզ մեծամասնությամբ:

32. Ֆակուլտետի ընդհանուր ժողովն ընտրում է ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահին, փոխնախագահներին և քարտուղարին 2 տարի ժամկետով:

33. Ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահը, փոխնախագահները, քարտուղարը, հանձնաժողովների ու ակումբների նախագահները միասին կազմում են ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահություն:

34. Ֆակուլտետի ուսանողական խորհրդի հանձնաժողովների ու ակումբների նախագահները հանդիսանում են ՀՊՄՀ ուսանողական խորհրդի համապատասխան հանձնաժողովների ու ակումբների անդամներ:

35. Ֆակուլտետի ուսանողական խորհուրդը պարբերաբար ՀՊՄՀ ուսանողական խորհրդի նախագահությանն է ներկայացնում ֆակուլտետի ուսանողների խնդիրները, բողոքներն ու առաջարկությունները:

36. Ֆակուլտետի ուսանողական խորհրդի նիստերը գումարվում են ոչ ուշ, քան երկու շաբաթը մեկ անգամ: Ֆակուլտետի խորհուրդը նախագահության անդամների ընդհանուր թվի կեսից ավելիի պահանջով կարող է հրավիրել արտահերթ նիստ:

37. Ֆակուլտետային ուսանողական խորհրդի նախագահությունն իր լիազորությունները դադարեցնում է ֆակուլտետի ուսանողական խորհրդի ընդհանուր ժողովի անդամների կեսից ավելիի որոշմամբ կամ ՀՊՄՀ ուսանողական խորհուրդի նախագահի որոշմամբ՝ իրեն տրված պարտականությունները չկատարելու կամ ոչ կանոնակարգային գործունեություն ծավալելու դեպքում:

4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

38. Խորհրդի գործունեության ապահովման համար հատկացվում են ֆինանսական միջոցներ ՀՊՄՀ-ից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

39. Խորհրդին կարող են տրվել նվիրատվություններ, հանգանակություններ:

40. Խորհրդի ֆինանսական միջոցները գոյանում են ՀՊՄՀ-ի հաշվին կատարվող մասհանումներից, նվիրատվություններից, հանգանակություններից և ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ աղբյուրներից:

5. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

41. ՀՊՄՀ ուսանողական խորհրդի գործունեությունը դադարում է ՀՀ օրենքներին համապատասխան, ինչպես նաև Խորհրդի ընդհանուր ժողովի անդամների թվի 2/3-ի որոշմամբ: